600.0229.01.07.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

1 հուլիսի 2020 թվականի №229Ա

ք.Երևան

«ՋԻՄԵԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՋԻՄԵԼ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՋԻՄԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի հունիսի 8-ի հայտը և հունիսի 12-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՋԻՄԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Ջիմել» փոքր հիդրոէլեկտրակայանում (Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում (քաղաք Կապան), Գեղի գետի Գեղի-Եղվարդ ոռոգման ջրատարի վրա (ոռոգման համակարգ)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2038 թվականի հուլիսի 2-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2023 թվականի հուլիսի 2-ը:
2. Հաստատել «ՋԻՄԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվող «Ջիմել» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 2-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
1 հուլիսի 2020թ.